ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/99

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ

Բողոք բերող՝ «Պրոթերմ» ՍՊԸ

ՀՀ պետական վերահսկողական ծառայություն

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ

Մասնակցությամբ՝

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Տ. Լաճիկյանի, Ա. Հակոբյանի,

«Պրոթերմ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Է. Չատինյանի,

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներկայացուցիչ՝ Մ. Սահակյանի,

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչ՝ Լ. Վարոսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ՀՇԳՑ թ1 էներգաբլոկի լուսավորության համակարգի նորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Պրոթերմ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 19.08.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. **Գործի նախապատմությունը**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. դադարեցնել թիվ «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020թ.-ի օգոստոսի 12-ի թվագրմամբ թիվ 2 արձանագրության 2-րդ բաժնի 1-ին կետով կայացված որոշումը:

2. դադարեցնել թիվ «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020թ.-ի օգոստոսի 12-ի թվագրմամբ թիվ 2 արձանագրության 3-րդ բաժնի կայացված որոշումը:

3. պարտավորեցնել պատվիրատուին ընդունել «Պրոթերմ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) բողոքը մակագրվել է 19.08.2020թ.-ին: 20.08.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/81 համարի ծածկագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 14.09.2020թ.-ի թիվ 255-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/81 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 15.09.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

16.09.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/99 համարի ծածկագիրը և հրապարակվել www.gnumner.am կայքում:

24.08.2020թ.-ի Ընկերության միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 26.08.2020թ.-ի թիվ ԲՔԱ-ԳՆ/2/12834-2020 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավվել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը և 26.08.2020թ.-

ի թիվ ԲՔԱ-ԳՆ/2/12385-2020 գրությամբ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը:

28.08.2020թ.-ին, 07.09.2020թ.-ին, 22.09.2020թ.-ին, 30.09.2020թ.-ին և 02.10.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 30.09.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.10.2020թ.-ին:

2. **«Պրոթերմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Պրոթերմ» ՍՊԸ-ն 19.08.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՇԳՅ Թ1 էներգաբլոկի լուսավորության համակարգի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է թիվ ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67 գնանշման հարցման ընթացակարգ:

2. Նշված գնանշման հարցմանը մասնակցության հայտ են ներկայացրել

ա/ «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ն

բ/ «Պրոթերմ» ՍՊԸ-ն

3. 2020թ. օգոստոսի 14-ին գնահատող հանձնաժողովը հրապարակել է թիվ 2 արձանագրությունը /արձանագրության վրա նշված է 12.08.2020թ./ որի 2-րդ բաժնի 1-ին կետով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ին:

4. 2020թ. օգոստոսի 14-ին գնահատող հանձնաժողովը հրապարակել է թիվ 2 արձանագրությունը /արձանագրության վրա նշված է 12.08.2020թ./ որի 3-րդ բաժնով առաջարկվում է կնքել պայմանագիր :

1. Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատումը իրականացվել է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալուց օրվանից հաշված ոչ թե 10, այլ 12- րդ օրը:

2. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի տնօրեն Սահակ Բաբոյանը ոչ 29.07.2020թ. և ոչ էլ 07.08.2020թ. լիազորագրով լիազորություն չի տվել Վլադիմիր Մարգարյանին էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրելու մրցույթի հայտի փաստաթղթերը:

3. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի տնօրեն Սահակ Բաբոյանը 07.08.2020թ. լիազորագրով լիազորել է ընկերության փոխտնօրեն Վլադիմիր Մարգարյանին ստորագրել

թիվ ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի հայտի փաստաթղթերը, այն դեպքում, որ հայտով ներկայացված բոլոր հավելվածները պետք է ստորագրված լինեին 29.07.2020թ.-ին:

4. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից 29.07.2020թ.-ի ներկայացված լիազորագրի հերթական համարը և 07.08.2020թ.-ի ներկայացված լիազորագրի հերթական համարը նույնությամբ կրկնվում են:

5. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից հաստատված լրացված ծավալաթերթ-նախահաշվում նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռը (10%) գերազանցում է հրավերով և ՀՀ կառավարության 2017թ.-ի 526-Ն որոշմամբ սահմանված և թույլատրված առավելագույն շեղումներին:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի՝ Յուրաքանչյուր անձ իրավունք անի բողոքարվելու գնահատող հանձնաժողովի .... և որոշումները:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն '

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու ... գնահատող հանձնաժողովի գործողությունները ... որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին. 2ին մք ընդունելով վերը նշված նորմերը, ներկայացնում եմ սույն բողոքը, քանի որ գտնում եմ Գնահատող հանձնաժողովի 2020թ. օգոստոսի 12-ի անօրինական որոշմամբ ոտնահարվել է «Պրոթերմ» ՍՊԸ-ի իրավունքները:

Այսպես՝

1. Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 11-րդ ենթակետի՝ Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.

Այսինքն, գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում մասնակիցները պարտավորվում են իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Սույն գործով 29.07.2020թ., իսկ այնուհետև նաև 07.08.2020թ. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի տնօրեն Սահակ Բաբոյանը լիազորագիր է տվել ընկերության փոխտնօրեն Վլադիմիր Մարգարյանին:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի՝ Լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասի՝ Լիազորագրի գործողության ժամկետը չի կարող երեք տարուց ավելի լինել: Եթե լիազորագրում ժամկետ նշված չէ, ապա այն ուժը պահպանում է տալու օրվանից մեկ տարվա ընթացքում:

Այսինքն, լիազորագրում հստակ, գրավոր կարգով պետք է նշվի այն լիազորությունը, որն իր փոխարեն լիազորվածը կարող է իրականացնել, ինչպես նաև այն ուժի մեջ է մտնում տալու օրվանից:

Պետք է նկատել, որ «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի տնօրեն Սահակ Բաբոյանը ո՛չ 29.07.2020թ. և ո՛չ էլ 07.08.2020թ. լիազորագրով լիազորություն չի տվել Վլադիմիր Մարգարյանին էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրելու մրցույթի հայտի փաստաթղթերը:

Այսինքն, ստացվամ է. որ առանց համապատասխան Լիազորության Վլադիմիր Մարզարանը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատէդ է մրցույթի հայտի փաստաթղթերը:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ լիազորագրում առկա է եղել նշում մրցույթի հայտի փաստաթղթերը ստորագրելու մասով, ապա պետք է նշեմ, որ այդ լիազորությունը կարող էր լիազորված անձը իրականացնել եթե մրցույթը չանցկացվեր էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով: Այսինքն, ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ սահմանված է մրցույթի ընթացակարգի անցկացման 2 եղանակ, ուստի եթե մրցույթը անց է կացվում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, ապա բոլոր փաստաթղթերը պետք է ստորագրվեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ,

հետևաբար էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու համար պետք է լիազորողը գրավոր կարգով լիազորի լիազորվողին, ինչը սույն գործով բացակայել է:

Ավելին, «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի տնօրեն Սահակ Բաբոյանը 07.08.2020թ. լիազորել է Վլադիմիր Մարգարյանին ստորագրել թիվ ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67 ծածկագրով մրցույթի հայտի Փաստաթղթերը:

Սակայն պետք է նկատել, որ 07.08.2020թ. հետո Վ.Մարգարյանը թիվ ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67 ծածկագրով մրցույթի որևէ փաստաթուղթ չի ստորագրել: Առավել հստակ ասված, վերջինս հայտը ներկայացրել է 29.07.2020թ., այսինքն, հայտի բոլոր փաստաթղթերը պետք է ստորագրվեր դեռևս 29.07.2020թ, սակայն այդ նույն թվականին տրված լիազորագրով Սահակ Բաբոյանը չէր լիազորել Վ.Մարգարյանին ստորագրելու կոնկրետ թիվ ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67 ծածկագրով մրցույթի հայտի փաստաթղթերը:

Պետք է նկատել, որ գնահատող հանձնաժողովը նույնպես այդ խախտումը նկատել էր, սակայն ի զարմանս ինձ, անտեսել է այն կարևոր հանգամանքը, որ «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված լիազորագրով կրկին չի վերացվել խախտումը, այլ կերպ ասած 29/07/2020թ. լիազորագրով կրկին իրավունք չի վերապահվել Վ. Մարգարյանին մասնակցելու կոնկրետ թիվ ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67 ծածկագրով մրցույթի և էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրելու այդ փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովը անտեսել է այս կարևոր հանգամանքը, ինչն էլ բնականաբար հանգեցնում է թիվ 2 արձանագրության 2-րդ բաժնի 1-ին կետի դադարմանը:

2. Գնահատող հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 22-ի «1-1» որոշմամբ հաստատվել է գնանշման հարցման մասին հայտարարություն, որում նշվել է սույն ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկարոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրը ժամը 17:45-ը:

Հրավերի 8.2 կետի համաձայն՝ Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը յոթանասունհինգը չգերազանցելու դեպքում հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տաս, իսկ գերազանցելու դեպքում ՝ տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Տվյալ դեպքում թիվ ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում չափաբաժինների քանակը չի գերազանցել յոթանասունհինգը, ուստի պարզ մաթեմատիկական հաշվարկ կատարելու դեպքում ստացվում է, որ հայտերը կարող էին

ներկայացվել մինչև 29.07.2020թ., այս օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովը պարտավոր էր գնահատել մասնակիցների կողմից ներկայացված հայտերը:

Սույն գործով գնահատող հանձնաժողովը հայտերը գնահատման արձանագրությունը հրապարակել է 2020թ. օգոստոսի 14-ին, այսինքն ոչ թե 10, այլ 12-րդ աշխատանքային օրը:

3. Հաջորդիվ պետք է հայտնեմ, որ «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից թիվ ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացվել է իր կողմից հաստատված լրացված ծավալաթերթ-նախահաշիվ:

Ներկայացված ծավալաթերթ-եախահաշվի նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշռի ռաումնասիրությունից հետևում է, որ այն գերազանցում է հրավերով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. 526-Ն որոշման 32-րդ մասի 3-րդ կետի՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կոդմից՝

ա. հաստատված լրացված ծավալաթերթ-նախահաշիվ հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ նկատի ունենալով որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվեի

Համաձայն Հրավերի 4.3 կետի՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է՝ շինարարական աշխատանքների գնման դեպքում

- իր կողմից հաստատված լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կայմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել.

Հայտնում եմ, որ

Տվյալ դեպքում ստացվում է, որ «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից հաստատված լրացված ծավալաթերթ-նախահաշվում նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռը գերազանցում է հրավերով սահմանված տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից, ինչն էլ հանգեցնում է ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ և հրավերի 4.3 կետերի խախտմանը (կից ներկայացնում եմ ծավալաթերթ-նախահաշիվը):

Ուշագրավ է այն հանգամանքը, որ այս խախտումներին ուշադրություն չի դարձրել պատվիրատուն և 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել այն անձին, որ հայտը ներկայացվել է հրավերի և ՀՀ օրենսդրության պահանջներին անհապատասխան»:

Ելնելով վերոգրյալից, «Պրոթերմ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. դադարեցնել թիվ «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020թ.-ի օգոստոսի 12-ի թվագրմամբ թիվ 2 արձանագրության 2-րդ բաժնի 1-ին կետով կայացված որոշումը:

2. դադարեցնել թիվ «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020թ.-ի օգոստոսի 12-ի թվագրմամբ թիվ 2 արձանագրության 3-րդ բաժնի կայացված որոշումը:

3. պարտավորեցնել պատվիրատուին ընդունել «Պրոթերմ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

Ընկերությունը 26.08.2020թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ, հավելել է հետևյալը.

«1. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՇԳՑ Թ1 էներգաբլոկի լուսավորության համակարգի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է թիվ ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67 գնանշման հարցման ընթացակարգ:

2. Նշված գնանշման հարցմանը մասնակցության հայտ են ներկայացրել «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ն և <<Պրոթերմ>> ՍՊԸ-ը

3. 2020թ. օգոստոսի 6 ին գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը մեկ աշխատանքային օրով և հնարավորություն տվել ընկերություններին շտկել անհամապատասխանությունները:

4. 2020թ. օգոստոսի 14-ին գնահատող հանձնաժողովը հրապարակել է թիվ 2 արձանագրությունը /արձանագրության վրա նշված է 12.08.2020թ./ որի 2-րդ բաժնի 1-ին

կետով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ին:

5. 2020թ. օգոստոսի 14-ին գնահատող հանձնաժողովը հրապարակել է թիվ 2 արձանագրությունը /արձանագրության վրա նշված է 12.08.2020թ./ որի 3-րդ բաժնով առաջարկվում է կնքել պայմանագիր:

1. Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատումը իրականացվել է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալուց օրվանից հաշված ոչ թե 10, այլ 12- րդ օրը:

2. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի տնօրեն Սահակ Բաբոյանը ոչ 29.07.2020թ. և ոչ էլ 07.08.2020թ. լիազորագրով լիազորություն չի տվել Վլադիմիր Մարգարյանին էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրելու մրցույթի հայտի փաստաթղթերը:

3. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի տնօրեն Սահակ Բաբոյանը 07.08.2020թ. լիազորագրով լիազորել է ընկերության փոխտնօրեն Վլադիմիր Մարգարյանին ստորագրել թիվ ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի հայտի փաստաթղթերը, այն դեպքում, որ հայտով ներկայացված բոլոր հավելվածները պետք է ստորագրված լինեին 29.07.2020թ.-ին:

4. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից 29.07.2020թ.-ի ներկայացված լիազորագրի հերթական համարը և 07.08.2020թ.-ի ներկայացված լիազորագրի հերթական համարը նույնությամբ կրկնվում են:

5. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի տնօրեն Սահակ Բաբոյանը 07.08.2020թ. լիազորագրով լիազորել է ընկերության փոխտնօրեն Վլադիմիր Մարգարյանին ստորագրել թիվ ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի հայտի փաստաթղթերը, այն դեպքում, որ հայտով ներկայացված բոլոր հավելվածները պետք է ստորագրված լինեին 29.07.2020թ.-ին:

6. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից 07.08.2020թ.-ն ներկայացված ծավալաթերթ-նախահաշվով ամբողջ թիվը՝ 9004453 ՀՀ դրամը, չի համապատասխանում ընկերության կողմից Հավելված 2 ներկայացված գնային առաջարկի ընդհանուր արժեքին՝ 9004320 ՀՀ դրամ:

1. Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 11-րդ ենթակետի՝ Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը

հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.

Այսինքն, գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում մասնակիցները պարտավորվում են իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Սույն գործով 29.07.2020թ., իսկ այնուհետև նաև 07.08.2020թ. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի տնօրեն Սահակ Բաբոյանը չի լիազորել փոխտնօրեն Վլադիմիր Մարգարյանին թիվ ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67 ծածկագրով գնման հայտը ստորագրել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ավելին՝ 29.07.2020թ. տնօրեն Սահակ Բաբոյանն ընդհանրապես չի լիազորել փոխտնօրեն Վլադիմիր Մարգարյանին, որպեսզի վերջինս մասնակցի թիվ ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67 ծածկագրով մրցույթին:

06.08.2020թ. ին պատկիրատան էլեկտրոնային եղանակով ծանուցել է «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԲ-ը, առ այն, որ ի թիվս այլ բացթողումների մասնակիցը պետք է ուղղի նաև իր կողմից ներկայացրած |իազորագիրը (մասնավորապես մրցույթի ծածկագիրը): «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԲ-ը սահմանված ժամկետում ուղղել է պատվիրատուի կողմից պահանջված ծածկագիրը, սակայն լիազորագրով լիազորված անձը օժտված է ստորագրելու ձեռագիր ստորագրությամբ, այլ ոչ թե էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ներկայացրած լիազորագրից ակնհայտ երևում է որ ստորագրությունը պատկանում է ոչ թե լիազորված անձ Վլադիմիր Մարգարյանին, աղ տնօրեն Սահակ Բաբոյանին:

Ավելին լիազորագիրը տրվել է 07.08.2020թ.-ին, իսկ մրցույթը կայացել է 29.07.2020թ.-ին, այսինքն մրցույթի փաթեթի ներկայացման օրը տվյալ անձը լիազորված չի եղել մասնակցելու և ստորագրելու թիվ ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67 ծածկագրով գնման մրցույթի հավելվածները, հատկապես գնային առաջարկը, Հավելված 2 (ի դեպ և 29.07.2020թ.-ի և 07.08.2020թ.-ի լիազորագրերն ունեն նույն հերթական համարը):

Հարգելի պարոն Ներսիսյան սույն բողոքի քննության շրջանակներում հարկ եմ համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը որ պահից է անձը համարվում լիազորված և ինչ լիազորություններով է անձը օժտված լինում լիազորագրի շրջանակներում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ: Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝ 1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն. սակայն դրան չեն հակասում, քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն օրենքին, այլ իրավական ակտերին կամ կողմերի համաձայնությանը համապատասխան միակողմ գործարք կնքելու համար անհրաժեշտ է մեկ կողմի կամքի արտահայտությունը և մյուս կողմի ակցեպտավորումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 291-րդ հոդվածի համաձայն՝ միակողմ գործարքը պարտականություններ է ստեղծում գործարքը կնքած անձի համար: Այն կարող է այլ անձանց համար պարտականություններ ստեղծել միայն օրենքով կամ այդ անձանց հետ համաձայնությամբ նախատեսված դեպքերում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 292-րդ հողկածի համաձայն՝ միակողմ գործարքների նկատմամբ համապատասխանաբար կիրառվում են պարտավորությունների և պայմանագրերի մասին ընդհանուր դրույթները, եթե դրանք չեն հակասում օրենքին, գործարքի միակողմանի բնույթին և էությանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և

պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում անմիջականորեն ներկայացվողի (լիազորված անձ) համար:

Վերոգրյալ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ լիազորագիրը իր բնույթով հանդիսանում է պարտավորությունների և իրավունքների մի ամբողջություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հողվածի 1-ին կետի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

Վերոգրյալ խնդրին անդրադարձել է նաև Վճռաբեկ Դատարանն 18.07.2014թ.-ի իր թիվ ԵԿԴ/1447/02/12 գործում և արձանագրել է հետևյալը

«.. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմք կարող է հանդիսանալ նաև լիազորագիրը, քանի որ այն միակայմ գործարք է, որը ներկայացուցչին պարտավորեցնում է գործել դրանում սահմանված լիազորությունների շրջանակում, և ներկայացվողի անունից գործելու իրավունք է վերապահում այն պահիցլ երբ ներկայացուցիչը համաձայնվում է ստանալ լիազորագիրը ն/կամ գործել դրանում սահմանված լիազորություններին համապատասխան: Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի ուժով ներկայացուցիչը պարտավոր է պատշաճ իրականացնել լիազորագրով ստանձնած լիագորությունները պարտավորությունները, որոնց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պարագայում վերջինս իր վրա կրում է դրա արդյունքում առաջացած անբարենպաստ հետևանքների, այդ թվում նաև պատճառված վնասի ռիսկը:.>>

Հարգելի բողոքներ քննող անձ վերոգրյալ նորմերի ամբողջական և համակարգային վերլուծության լույսի ներքո կարող ենք հաստատապես ասել, որ 07.08.2020թ.-ին ներկայացված լիազորագիրն ուժի մեջ է մտել 07.08.2020թ.-ին, որովհետև լիազորված կողմն այն ակցեպտավորել է և հաստատել է իր թվային ստորագրությամբ նույն ամսաթվին:

Հարգելի պարոն Ներսիսյան, մեր խորհին համոզմամբ երբ հնարավորություն է տրվում շտկել լիազորագիրը ն այն ներկայացվում է հայտի ներկայացման ամսաթվից տարբերվող ամսաթվով, ապա հայտով ներկայացված բոլոր հավելվածները նույնպես պետք

է ներկայացվեն նոր տրված լիազորագրի ամսաթվով, որը ի դեպ չի կատարվել (հավելված 2-գնային առաջարկ):

2. Հաջորդիվ պետք է հայտնեմ, որ «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲ-Բ-ի կողմից թիվ ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացվել է իր կողմից հաստատված լրացված ծավալաթերթ-նախահաշիվ:

Ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշռի ուսումնասիրությունից հետևում է, որ այն գերազանցում է հրավերով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. 526-Ն որոշման 32-րդ կետի 3-րդ ենթակետի՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից՝

ա. հաստատված լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կաըող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել,

Համաձայն Հրավերի 4.3 կետի՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է՝ շինարարական աշխատանքների գնման դեպքում

իր կողմից հաստատված լրացված ծւսվալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավայաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել.

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի.

«.... Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը ելնելով

դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն

Նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:...»:

Վերոգրյալ նորմերի համակարգային վերլուծության լույսի ներքո պարզ է դառնում այն նպատակների ամբողջությունը, որը եղել է այդ ձևակերպման հիմքում: Այսպես

Գործադիրն իր 2017թ. 526-Ն որոշման 32-րդ կետի 3-րդ ենթակետով, երբ սահմանել է նախահաշվային բաժինների համար առավելագույն կշիռներ, նպատակ է ունեցել թույլ չտալ մեկ բաժնի կշռի արհեստական ուռճացումը և մեկ այլ բաժնի կշռի արհեստկան նվազեցում: Մինչև այս օրենսդրական փոփոխությունը ցավոք սրտի պրակտիկայում շատ է հանդիպել, երբ մասնակիցն ուռճացնելով մի բաժնի կշիռը կատարել է բացառապես այդ կշռով ներկայացված աշխատանքը, իսկ մյուս բաժինների աշխատանքը անգամ չեն էլ կատարել:

Հարգելի բողոքներ քննող անձ ցանկանում եմ ընդգծել, որ թե 526-Ն որոշմամբ և թե հրավերով հստակ նշած է, որ անձը պարտավոր է կշիռները հաշվարկել ընդհանուր գնային առաջարկից: Մեր կոնկրետ դեպքում դա 9004453 ՀՀ դրամն է:

Ստորև ներկայացնում եմ «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած ծավալաթերթ-նախահաշիվը և ըստ բաժինների շեղումները

1 I				Նախահաշվային արժեքը Նախահաշվային արժեքը ընդհանուրի նկատմամբ % - ներով		Փաստացի ըստ տոկոսի
Հ/հ	Աշխատանքի անվանումը	Չ/մ	Քանակը			
	2	3	4	5		
	Ապամոնտաժման աշխատանքներ			1,160	0.870 %	
1	6 մմ² կտրվածքով մալուխի ջղերի անջատում մինչև 23 մ բարձրության կրա	Հատ	44	2200		
2	2.5 մմ2 կտրվածքով մարուխի ջրերի անջատում մինչև 23 մ բարձրութրսն Վրա	Հատ	126	6300		
3	400 4տ հզորության լուսատուների ապամոնտաժում մինչև 23 մ բարձրության, վրա	Հատ	25	12500		
	250 4տ հզորության լուսատուների ապամոնտաժում մինչև 12 մ բարձրության վրա					

4		Հատ	85	32300		
5	PKY 400 տիպի լուսատուների ապամոնտաժում 11մ բարձրության Վրա	Հատ Հատ	40	15116		
6	PKY 400 տիպի լուսատուների ապամոնտաժում 25մ բարձրության վրա	Հատ	20	10000	78 416	104 540
	Նորոգում, դետալների փոխարինումով			57,660	43.288 %	
7	400 4տ հզորությունն 2404, լարման այրոսէզների և 2504 թսրման 37- 60մկՖ, կոնդենսատորների փոխարինում /արժեքի հետ միասին/	Հատ	15	375000		
8	250 Վտ հզորության 240Վ լարման դրոսելների և 37-60մկՖ կոնդենսատորների փոխարինում /արժեքի հետ միասին/	Հատ	45	1035000		
9	400 Վտ հզորության մետալ հալիդե տիպի լամպերի փոխարինում /արժեքի հետ միասին/	Հատ	25	787816		
10	250 Վտ հզորության մետալ հալիդե տիպի լամպերի փոխարինում արժեքի հետ միասին	Հատ	85	1700000	3 897 816	5 191 968
	Մոնտաժման աշխատանքներ			41,180	30,92%	
11	400 Վտ հզորության լուսատուների մոնտաժում մինչև 23 մ բարձրության վրա	Հատ	25	32500		
12	250 Վտ լուսատուների մոնտաժում մինչև 12 մ բարձրության վրա	Հատ	85	85000		
13	LED տիպի լուսատուների (որոնց ձեռք բերումը կատարվում է Կապալուռի կողմից և արժեքը ներառվում է գնի մեջ) մոնտաժում 11մ բարձրության վրա Լուսատուների տեխ. տվյալները Հզորությունը - 120Վտ; Լուսային հոսքը ոչ պակաս՝10800Լմ; սնող լարումը - 170-260Վ; IP-65; Լուսային ջերմաստիճանը - 5000Կ; Ջերմաստիճանային տիրույթը - (-45 + 40)℃	Հատ	40	1629268		
14	LED տիպի լուսատուների (որոնց ձեռք բերումը կատարվում է Կապալուռի կողմից և արժեքը ներառվում է գնի մեջ) մոնտաժում 25մ բարձրության վրա Լուսատուների տեխ. տվյալները Հզորությունը - 120Վտ; Լուսային հոսքը ոչ պակաս՝10800Լմ; սնող լարումը - 170-260Վ; IP-65; Լուսային ջերմաստիճանը-5000Կ; Ջերմաստիճանային տիրույթը - (-45 + 40)℃	Հատ	20	1020000		
15	6 մմ2 կտրվածքով մալուխի ջղերի միացում սեղմակներին մինչև 23 մ բարձրության վրա	Հատ	44	4400		
16	2,5 մմ2 կտրվածքով մալուխի ջղերի միացում սեղմակներին	Հատ	126	12600	2 783 768	3 707 944
	Ընդհանուրը	Դրամ		6760100		
	Շահույթ	Դրամ	11%	743611		
	Ընդհանուր	Դրամ		7503711		
	ԱԱՀ	Դրամ	20%	1500742		
	Ամբողջ	Դրամ		9004453		

Աղյուսակից երևում է, որ կշիռներն ակնհայտ շեղվում են հրավերով սահմանված և 526-Ն կառավարության որոշման թույլատրելի 10%-ից:

3. Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի՝ «... հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը..»

Տվյալ դեպքում ակնհայտ է դառնում, որ «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից արդեն իսկ շտկված ծավալաթերթ-նախահաշիվով ներկայացված <<ԱՄԲՈՂՋ>> թիվը 9004453 ՀՀ դրամը, չի համապատասխանում ընկերության կողմից Հավելված 2 ներկայացված ընդհանուր արժեքին 9004320 ՀՀ դրամ:

Ամփոփելով բողոքի լրացումը ևս մեկ անգամ, պնդում եմ բողոքում նշված իրավական և փաստական հիմնավորումները»:

3. **<u>«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.**

Բողոքներ քննող անձը 20.08.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/12538-2020 գրությամբ դիմել է «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից 19.08.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«1. Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրության հետ կապված Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ- աշխատակազմը աշխատել է ոչ լրիվ կազմով!

2. ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկայի (ՀՇԳՅ թ1 էներգաբլոկի լուսավորության համակարգի նորոգման աշխատանքներ) մասով հաստատված գնումների պլանի թիվ 7 փոփոխությունը

տեղեկագրում հրապարակված է եղել 01.07.20թ. , որտեղ տվյալ աշխատանքը ներառված է եղել առանց ֆինանսական միջոցների նախատեսած լինելու: Այսուհետ 30.07.20թ. նույն տեղեկագրում հրապարակվել է գնումների պլանի թիվ 8 փոփոխությունը, որտեղ ՀՇԳՅ թ1 էներգաբլոկի լուսավորության համակարգի նորոգման աշխատանքների մասով նախատեսված է եղել 9016508 ՀՀ դրամ (procutement.am կայքից արտատպված փաստաթղթերը կցվում են):

3. Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ-ի Գնումների համակտրցողի ծառայությունը՝ համաձայն պայմանագրի մատուցում է «Լաճ գրուպ» ՍՊԸ-ն: Վերջինիս պարտականությունների մեջ է մտնում մինչև հրավեր հրապարակելը ճշտել ուղարկված հայտում նշված առարկայի վերաբերյալ բոլոր տվյալների համապատասխանությունը տեղեկագրում հրապարակված գնումների պլանի հետ, ինչը «Լաճ գրուպ» ՍՊԸ պատշաճ չի իրականացրել:

Հարկ ենք համարում նշել, որ Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ-ն՝ հանդիսանալով Հայաստանի Հանրապետության ստրատեգիական նշանակություն ունեցող կազմակերպություն, 2020 թվականի սեպտեմբերի 1 ին կանգնում է կապիտալ վերանորոգման, որին բացի տեղական Կապալառուներից մասնակցելու են նաև արտասահմանից հրավիրված թվով 50 մասնագետ: ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67 ծածկագրով ընթացակարի շրջանակներում ձեռք բերվող ՀՇԳՅ թ1 էներգաբլոկի լուսավորության համակարգի նորոգման աշխատանքները անհրաժեշտ է կատարել էլեկտրականի լուսավորության համար, այնպես որ էլեկտրականի կանգա ժամանակ անհրաժեշտ է ապահովել նորմերին համապատասխան լուսավորություն: Հակառակ դեպքում արտասահմանյան մասնագետները կարող են հրաժարվել իրենց կողմից պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելուց:

Հայցում ենք Ջեր ներողամտությունը տվյալ բացթողման համար և խնդրում ենք ընթացակարգը չեղարկած չհամարել»:

4. **<u>Բողոքարկման ընթացակարգի կողմ՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը</u>.**

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքաբերի 24.08.2020թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 26.08.2020թ.-ի թիվ ԲՔԱ-ԳՆ/2/12834-

2020 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ նաև՝ Ծառայություն):

Ծառայությունը լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Ծառայության ներկայացուցիչը 02.09.2020թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՇԳՑ թ1 էներգաբլոկի լուսավորության համակարգի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2020 թվականի հուլիսի 22-ին հայտարարված ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքով ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվների վերաբերյալ հայտնում եմ հետևյալը՝

- *Մի կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետով սահմանված է, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը ներկայացնում է իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Մյուս կողմից Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5-րդ կետով մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:*
- *Միևնույն ժամանակ, ծավալաթերթ-նախահաշիվներում առանձնացված տողերով մասնակիցները ներկայացնում են ընդհանուր գումար (ծավալաթերթ-նախահաշվով սահմանված բաժինների աշխատանքների հանրագումար), շահույթի չափ, ընդամենը գումար (ընդհանուր գումարի և շահույթի հանրագումար), հարկեր և ամբողջ գումար (ընդհանուր գումարի, շահույթի չափի և հարկերի հանրագումար):*

Նկատի ունենալով վերոգրյալ պայմանները՝ հայտնում եմ, որ Կարգով սահմանված մասնակիցների կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվների գնահատման և համեմատման ժամանակ առաջացած անհամապատասխանությունները վերաբերելի են Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին: Մասնավորապես՝

- *մասնակիցների համար անհասկանալի է ծավալաթերթ-նախահաշվում բաժինների համար լրացվող գումարները պետք է պարունակեն մնացյալ ծախսերը (շահույթ, հարկեր, վերադիր ծախսեր) թե ոչ, հետևաբար վերջիններս ծավածաթերթ-նախահաշիվները լրացնում են հրավերի պահանջներին համապատասխան,*
- *պատվիրատուների համար անհասկանալի է, թե մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների որ բաղադրիչի նկատմամբ պետք է իրականացվի հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի համեմատումը, քանի որ Կարգով սահմանված համեմատման դեպքում միշտ ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափը կգերազանցի տասը տոկոսը:*

Այսպիսով «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքով խնդիրը չի կարգավորվում և «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի հայտը մերժելով նույն խնդրի առաջ կանգնում է նաև «Պրոթերմ» ՍՊԸ-ն:

Քննարկվող խնդրին հանգուցալուծում տալու նպատակով՝ առաջարկում ենք հարցի պարզաբանման նպատակով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով սահմանված կարգով նախաձեռնել պաշտոնական պարզաբանման ստացման գործընթաց:»:

5. **<u>Բողոքարկման ընթացակարգի կողմ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.</u>**

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքաբերի 24.08.2020թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 26.08.2020թ.-ի թիվ ԲՔԱ-ԳՆ/2/12385-2020 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը (այսուհետ նաև՝ Գրասենյակ):

Գրասենյակի ներկայացուցիչը լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Գրասենյակի ներկայացուցիչը բողոքի վերաբերյալ ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով և իր դիրքորոշումը հայտնելով Հանձնաժողովի կողմից կազմված արձանագրություններին, բողոքի իրավական և փաստական հանգամանքներին:

6. **ԳԲՔԱ-LO**-2020/99 **բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՇԳՑ թ1 էներգաբլոկի լուսավորության համակարգի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 22.07.2020թ.-ին հայտարարվել է «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից) և «Պրոթերմ» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 12.08.2020թ.-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի և «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերով սահմանված վավերապայմաններին, մասնավորապես գնային առաջարկին կից՝ Ծավալաթերթ-նախահաշիվը սխալ է եղել լրացված:

iv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկված շտկման վերաբերյալ ծանուցման հիման վրա, Ընկերությունները սահմանված մեկ աշխատանքային օրյա ժամկետում ներկայացրել են պահանջված փաստաթղթի շտկված տարբերակները: Մասնակիցների ներկայացրած հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին բավարար: «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ն ճանաչվել է ընտրված/հաղթող մասնակից:

v. www.gnumner.am համացանցային կայքում 14.08.2020թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

vi. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից հայտին կից ներկայացված 29.07.2020թ.-ին թիվ 01-01-14 համարի լիազորագրի համաձայն՝ «Հիդրոէլեկտրամոնտաժ»

ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Բաբոյանի, լիազորել է Վ. Մարգարյանին, ստորագրել մրցույթի հայտի փաստաթղթերը:

7. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից 19.08.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին

մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ

հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման

բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան (որոշ բացառություններով), ապա ներկայացված հայտերը հանձնաժողովի կողմից մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՀՇԳՑ թ1 էներգաբլոկի լուսավորության համակարգի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 22.07.2020թ.-ին հայտարարված «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված գնային առաջարկին կից՝ Ծավալաթերթ-նախահաշիվը եղել է սխալ լրացված՝ չի համապատասխանել հրավերով սահմանված վավերապայմաններին: Հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկված շտկման

վերաբերյալ ծանուցման հիման վրա, «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ն սահմանված մեկ աշխատանքային օրյա ժամկետում ներկայացրել է պահանջված փաստաթղթի շտկված տարբերակը՝ հիմք Հանձնաժողովի 12.08.2020թ.-ի թիվ 2 արձանագրությունը: Նշվածով պայմանավորված Մասնակցի ներկայացրած հայտը գնահատվել է հրավերի պահանջներին բավարար և վերջինս ճանաչվել է ընտրված/հաղթող մասնակից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Հանձնաժողովի կողմից կազմված 12.08.2020թ.-ի թիվ 2 արձանագրությամբ չեն արձանագրվել Մասնակցի կողմից ներկայացված լիազորագրի վերաբերյալ թերություններ, որպիսիք նշվել են Հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին 06.08.2020թ.-ին ուղարկված ծանուցմամբ: Այն դեպքում, երբ Կարգի 41-րդ կետի դրույթների գնահատմամբ, պետք է փաստել, որ մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները, որոնք արձանագրվել են գնահատող հանձնաժողովի կողմից՝ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում:

Անդրադառնալով «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված այն դիրքորոշմանը, որ «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացվել է Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությանը և Հրավերի պահանջներին անհամապատասխան, այն է՝ կշիռները ակնհայտ շեղվում են թույլատրելի 10%-ից, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Ուսումնասիրելով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված և «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված շտկված ծավալաթերթ-նախահաշիվը, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ վերջինիս կողմից հայտով ներկայացված՝ հրավերին կցված ծավալաթերթով՝ ըստ աշխատանքների նախահաշվային

բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները կիրառվել են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, իսկ դրանց շեղումը ավել կամ պակաս չի եղել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից:

Մասնակցի կողմից ներկայացված հաստատված և լրացված ծավալաթերթ-նախահաշվով, վերջինս ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար ներկայացրել է ընդհանուր առմամբ 6 760 000 ՀՀ դրամ գումար, որին ավելացնելով շահույթի 11%-ը և ԱԱՀ-ի 20%-ը, ամբողջացրել և ստացել է 9 004 320 ՀՀ դրամ գումար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նշված «ընդհանուր գնային առաջարկ» եզրույթը չպետք է հասկանալ և կիրառել մասնակցի կողմից հայտին կից ներկայացրած Հրավերի հավելված 2-ի՝ գնային առաջարկի «Ընդհանուր գինը» սյունակում նշված գումարը: Գնային առաջարկի «Ընդհանուր գինը» սյունակը մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկի ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի հանրագումարն է, իսկ ծավալաթերթում շահույթի և ԱԱՀ-ի տողերն առանձնացված են: Հակառակ դեպքում, ծավալաթերթում շահույթի և ԱԱՀ-ի տողերը չէին առանձնացվի ու կներառվեին աշխատանքների կատարման համար առաջարկվող գումարին: Ավելին, սույն Ընթացակարգի հրավերին կցված ծավալաթերթով նշվել է «Նախահաշվային արժեքը ընդհանուրի նկատմամբ %-ներով» սյունակ, որն ենթակա է համադրման/համեմատման նույն ծավալաթերթում առկա «Ընդհանուրը» տողի հետ: Ընդ որում, հարկ է նկատել, որ հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները հաշվարկվել են նշված «Ընդհանուրը» տողում նշված գումարից: Ուստի կշիռները պետք է կիրառվեն մասնակցի առաջարկած՝ ծավալաթերթում առկա «Ընդհանուրը» տողում նշված գումարի նկատմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող ածը գալիս է այն եզրահանգման, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության դրույթների խախտում:

Անդրադառնալով բողոքով ներկայացված «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի անվամբ տրամադրված լիազորագրի վերաբերյալ ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն

հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին: Նոտարական ձև պահանջող գործարքներ կնքելու համար լիազորագիրը պետք է վավերացնի նոտարը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Հրավերի 2.7-րդ կետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ նաև՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը,

ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ հայտը ստորագրելու լիազորությունը հաստատող փաստաթուղթը՝ լիազորագիրը, հանդիսանում է հայտում ներառվող փաստաթուղթ, որը ներկայացվում է հայտը ստորագրելու պատշաճ լիազորությունը հավաստելու համար: Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցելու դեպքում պետք է ներկայացնի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Սույն գործի փաստերի հիման վրա, ուսումնասիրելով Մասնակցի կողմից հայտին կից ներկայացված լիազորագրի սկզբնական տարբերակը, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ այն ելնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի լիազորագրին վերաբերող դրույթներից և չի հակասում վերջիններին: Ներկայացված լիազորագրի բովանդակությունը լիարժեք թույլ էր տալիս լիազորված անձին ստորագրել մրցույթի հայտի փաստաթղթերը: Ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի իրավակարգավորումներից, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից հայտին կից ներկայացված 29.07.2020թ.-ին թիվ 01-01-14 համարի լիազորագիրը, որպես միակողմանի գործարք, համապատասխանում է նաև Օրենսգրքի՝ միակողմանի գործարքների ձևին և բովանդակությանը վերագրվող պահանջներին: Այն կնքված է փաստաթուղթ կազմելու միջոցով, արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի՝ Մասնակցի տնօրենի կողմից:

Ընդ որում, հարկ է փաստել, որ Կարգով և Հրավերով չեն սահմանվել լիազորագրի ձևի և բովանդակության վերաբերյալ լրացուցիչ պահանջներ, որոնց պետք էր այն համապատասխաներ (որոշակի ձևաթղթի վրա կնքելը և այլն):

Ամփոփելով վերոնշյալները, Բողոքներ քննող անձն արձանարում է, որ Մասնակցի կողմից ներկայացված սկզբնական լիազորագիրը ներկայացվել է ՀՀ օրենսդրության

պահանջների պահպանմամբ, ուստի Հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին 06.08.2020թ.-ին ուղարկված շտկման վերաբերյալ ծանուցումամբ արձանագրված անհամապատասխանությունները, լիազորագրի մասով, եղել են անհիմն, ինչպես նաև ոչ իրավաչափ, քանի որ այն շտկելու մասին ներկայացված պահանջը չի բխել Հանձնաժողովի 12.06.2020թ.-ի թիվ 2 արձանագրության բովանդակությունից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՀՇԳՑ թ1 էներգաբլոկի լուսավորության համակարգի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 22.07.2020թ.-ին հայտարարված «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/67» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կայացնելով «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի հայտը ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին բավարար գնահատելու մասին որոշում՝ գործել է իրավաչափ պահպանելով Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության պահանջները, որպիսի պայմաններում «Պրոթերմ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից 19.08.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/99 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**